

արուեստը : Տպագր. ասպարեզին մեջ նեղահետ յառաջանալով՝ նիմնած է երկու տպարան , մին՝ Ֆինձանճըլար Եօզուլու , բիւ 19 , (Պայպ Հաուզի այժմու շենքին տեղը) , որուն վարիչն էր Պ. Քիրիշճեան . միւսը՝ Ղալաթիոյ ժամին ետեւը , ճամաշքըճեան Գրիգորի (ապա քանանայ) նետ ընկերովի : Հրատարակած իր գործերը նամբաւատը էին՝ իրենց մաքուր տպագրութեամբ : Քիրքճեանի յօրինած տառերը ժամանակին ամեն կատարելագործեալներէն կը սեպուէին որոնք ցարդ իր մականուամբը կը յորջորջուին : Գործին սիրանար՝ իր նիւանդագին օրերուն իսկ , յառաջդիմելու եռանդը չէ մարած իր մեջ . ոչ մէկ ջանք կը խնայէր իր տպարանն օժտելու կատարելագործեալ մեքենաներով , զորս բերել կու տար Եւրոպայէն : Իր օրով՝ զիրերը ձեռքով կը ձուլուէին . Քիրքճեան նմարեց **Թուլումպալ**ով բախելու գործիքը : Իր ձուլարանին մեջ նա յերևնէ գատ ուրիշ յեզուէ տառեր պատրաստուած չեն : — Ռուրէն Գում Գարու քնակած ատեն տեղւոյն եկեղեցիին դպրասպետ եղած է , շնորհիւ իր գեղեցիկ ու մարգուած ձայնին : Սիրուած անձ մըն էր , բարեմամբոյր և նեղ քնատրութեանը նամար . վարած է Մայր եկեղեցւոյ Թուլ. Խորհրդոյ ատենասպետի պաշտօնը : Ճարտարօրէն կ'ամէր «քանօն» , որուն նամար արեւել. երաժշտութեան երկրպագուներ ձեռքի վրայ կը բռնէին գինք : Երբ վերջին տարիները Գրնայը նաստատուեցաւ , շարունակեց նոյն կղզիին եկեղեցւոյն մեջ դպրութիւնն՝ առ ի չգոյժ ձայնատորի : առանց իրեն ժամ չէր ըլլար : Գրնայը նաստատուելուն պատճառն էր նիւանդութիւնը , բժիշկներու խորհուրդով , որովհետեւ սերտօրէն վարած ըլլալով գործին՝ ստիպուած էր միշտ կապարի ու ծարիրի նետ խաղալ և ատոնց բունաղից փոշիները շնչելով տկար ինկած էր : Այս անձանձիր վաստակաւորին նամար անննար ըլլալով պանդոյր կեանք մը վարել , թիչ յետոյ կղզի փոխադրեց ձուլարանն իր յարակից բոլոր կազմածքով . նոնկէ էր որ կը դրկէր գիրեր՝ իր երկու տպարաններուն նամար : Հագին 45 տարեկան , մեռած է ծիւրախտէ՝ Օգոստ. 10 ի գիշերը , յ1870ական բուականին : Վաչելուչ յուզարկաւորութիւն մը եղած է , և ըստ վաղեմի սովորութեան՝ Մայր եկեղեցիէ բերուած դպրասպետի շապիկ ձգուած է դագաղին վրայ : — Մանէն քանի մը օր վերջ Եւրոպայէն կը նասնէին իր ապապրած մեքենաները , որոնք սնտուկներու մեջ դեռ եւս փակ՝ կը փոխադրուին Արմաշ որուն վանքէն կը գնուին : — Տպարանը յանձնուած է Պ. Քիրիշճեանի որ քանի մը տարի միայն շարունակած է : Իսկ Քիրքճեանի եղբայրը գիրերուն մայրերը ծախած է Հայ. Հռովմ. Էնֆիլեճեան վրդ.ի , 200 ֆրանս. ոսկիի փոխարէն .



Ռ Ո Ւ Բ Ե Ն Բ Ի Ւ Ր Ք Ճ Ե Ա Ն

վերջինս ալ ժամանակ մը վերջ , իր կարգին ծախած է գանոնք Յ. Պոյաճեանի , ի գին 250 օսմ. ոսկիի : — Ռուրէնի աշակերտներէն մէկ նոցի միայն կայ ողջ , Տեօվէթեան Սարգիսը , այժմ մեքենավար Պոյաճեան գործատան մեջ : — Մեր ձեռք ձգած կենդանագիրին ետեւ Քիրքճեան ձօն մը ունի գրած առ Եսայի պատրիարք Երուսաղեմի , 20 Օգոստ. 1867 , ի Գրնայը , որմէ կը նետուի թէ նոյն ատեններուն կղզի կը գանուէր արդէն : Այդ կենդանագիրը երկար նետապնդումներէ վերջ նագին կըցանք նայրապել նանգուցեալին քեռորդի Տիկին Ս. Գալենատերեանէ (Մաքրիքեոյ) : — **Տպած գիրերը .** — ձերթաի բիճարէր (1857-8) . Մեղու (1857-64) . Լուսաւորեալ դար . Քերականութիւն (1856) . Գ. Լուսաւորիչ . Կանժի մարքիզը (1858) . Գիտուն տղայք (1859) . Բարի մարդ՝ բարի քանանայ . Բարի մարդէն չար մարդոյն (1860) . Անգուրն Պարոս . Եռունկի գիշերները . Պղնձէ քաղաք . Առողջարանութիւն (Տքր. Ա. Կրճիկեան) 1861 . Այգիբ (1862) . Ազգ. Սանմանադրութիւն . Կայարէ և Սղեկա . Ֆօսթ և Մարգարիտ (1863) . Օրացոյց (1863, 66, 68) . Հենրիադղա , Գատարնութիւն դատարնութեանց . Երազանան . Թուրքանտա տիկին (1864) . Ազգ. նանգանակութիւն . Քննութիւն 1836ի սանմանադրութեան (1865) . Ծիլն Աւարայրի (1866-7) . Գրիստոնեական (Պ. Շանչեանց) . Հայ աղջկանց կարգուելու դիւրին ձամբայ (1866) . Զատիկ . Ընթացք աշխարհիս . Բնարն յաւերակս նայրենեաց (1867) . Սուտ լուսաւորեանն . Բառարան նայ. յոյն . Փիլիսոփայութեան պատմ. (1868) . Եօրն գիշերք . Հարսնիք մը . Տրամարանութիւն . Մամուլ (1869) . Գերեզմանք երիտասարդաց . Կի-